Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օտարման մեկնարկային գներ սահմանելու մասին որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջից, համաձայն որի համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու և մեկնարկային գին սահմանելու վերաբերյալ: Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը և սահմանել մեկնարկային գներ:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Համայնքային սեփականություն հանդիսացող 7 միավոր գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդ-վաճառքի մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Աճուրդ-վաճառքով օտարվող համայնքային սեփականություն հանդիսացող 7 միավոր 40,10173 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը օտարելու մասին որոշման ընդունումը (որոնց կադաստրային արժեքը կազմում է 41350117 դրամ) Նաիրի համայնքի բյուջեում ենթադրում է 97500000 դրամ եկամուտների ավելացում, ինչպես նաև աճուրդի ժամանակ կատարված քայլերի արդյունքում հավելվող լրացուցիչ գումարներ:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**